Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Աբովյանի N 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
Առարկա՝ Հայոց պատմություն
Թեմա՝ Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը հայոց պատմության դասերին:

Վերապատրաստող, մենթոր՝ Նաիրա Մելիքսեթյան

Ուսուցիչ՝ Գայանե Անդրանիկի Դավթյան

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն 3

1.1 Պրոբլեմային ուսուցման կարուցվածքը և մեթոդները 9

1.2 Պրոբլեմային ուսուցման կիրառումը հայոց պատմության դասերին 14

Եզրակացություն 19

Գրականության ցանկ 21

Ներածություն

Ինչպիսի՞ հասարակությունում են ապրելու մեր երեխաները վաղը։ Այս հարցի պատասխանի կարևոր մասն ընկած է այն կրթության մեջ, որ նրանց տալիս ենք այսօր։ Կրթությունն առանցքային դեր ունի ապագայի ձևավորման գործում և արտացոլում է աշխարհի այն տեսակը, որն ուզում ենք ստանալ հետագա սերունդների համար։

Հանրակրթության բովանդակության արդիականացման ռազմավարությունը սահմանում է ուսուցիչների ուսուցման նոր ուղեցույցներ, որի շրջանակներում սովորողը ուսումնական գործընթացում պետք է տիրապետի հիմնական կարողություններին՝ գիտելիք, հմտություն ,դիրքորոշում, արժեք։

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի հիմնարար փոփոխությունների հետ փոփոխվում է նաև ուսումնական գործընթացը, ուստի սահմանված չափորոշչային խնդիրները կատարելու համար ինչպես նաև հաշվի առնելով «Հայոց պատմությունե առարկայի տարեկան չափորոշչային պահանջները, կատարվում են կրթության արդիականացումներ, որոնց իրականացման շրջանակներում անհրաժեշտ է սովորեցնել սովորողին մտածել՝ կիրառելով ուսուցման մեթոդներ, որոնք նրան թույլ կտան ինքնուրույն աշխատանքի ընթացքում գտնելով օրինաչափություններ ձեռք բերեն նոր գիտելիքներ։

Հայոց պատմությունից ձեռք բերած գիտելիքները կնպաստեն սովորողի մոտ հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի, պետականակիր գիտակցության, ազգային ինքնագիտակցության և դիմագծի ձևավորմանը, կարժևորի սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության մեջ, կզարգանա որպես գիտակից, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացի։

Ուսուցման գործընթացն իրականացվում է տարբեր մեթոդների օգնությամբ։ Մեթոդը նպատակին հասնելու միջոց է, ուղի, այն գործիք է ուսուցչի համար իր առարկայական չափորոշչային նպատակներին հասնելու ճանապարհին։ Ուսուցման մեթոդները դասակարգվում են ըստ ուսուցման նպատակների, տրամաբանական կատեգորիաների, սովորողների գիտելիքներ ձեռք բերելու միջոցների, ուսուցչի և սովորողի ուսումնական գործունեություն բնույթի[4]։ Կրթական պետական չափորոշիչի պահանջները

իրականացնելու համար ուսուցիչը պարտավոր է նպաստել ուսումնական հաստատությունում սովորողների կողմից հանրակրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, իրականացնել հանրակրթական ծրագրերը:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս[5] և ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: Եվ ինչպես ճիշտ դեղորայքն է ունենում բուժիչ հատկություն այնպես էլ ուսուցման ճիշտ ընտրված մեթոդները կծառայի նոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների մշակմանն ու ամրապնդմանը, ստեղծագործական մտածողության և անձնային այլ որակների զարգացմանը: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:[5]

Պատմության դասավանդումն ունի առանձնահատկություն, որն իրենից ներկայացնում է որոշակի պատրաստակամություն՝ դիտարկելու պատմական իրադարձությունները, անձնավորությունները, զարգացումները, մշակույթները և հասարակությունները տարբեր տեսակետներից, օգտագործելով եղանակներ և մեթոդներ, որոնք հիմնարար դեր են խաղում պատմական գիտության մեջ: Սրանից ելնելով պատմության դասավանդման մեթոդները կարելի է դասակարգել երեք խմբի՝

1. Բանավոր, տեսողական, գործնական (ըստ ուսումնական նյութի աղբյուրի)
2. Վերարտադրողական, բացատրական-ցուցադրական, որոնողական, հետազոտական, պրոբլեմի վրա հիմնված և այլն (ըստ կրթական-ճանաչողական գործունեության բնույթի) 3. Ինդուկտիվ և դեդուկտիվ (ըստ ուսումնական նյութի ներկայացման և ընկալման տրամաբանության)

Ուսուցման և ուսումնառության մեթոդները մեծ ազդեցություն ունեն սովորողների շրջանում կարողունակությունների զարգացման վրա: Կոմպետենտ գործելու համար անձը գործի է դնում տվյալ իրավիճակին համապատասխան արժեքներ, վերաբերմունք, հմտություններ, գիտելիք և քննադատական ընկալում, օրինակ՝ որևէ երևույթ մեկնաբանելու, որևէ հիմնախնդիր վերլուծելու և լուծելու կամ այլընտրանքային լուծումներ առաջարկելու նպատակով:

Պրոբլեմային ուսուցումը հետապնդում է այնպիսի նպատակներ, ինչպիսիք են՝ աշակերտներին օգնել զարգացնելու իրենց մտավոր և հետազոտական հմտությունները, աշակերտներին օգնել դառնալու ինքնուրույն սովորողներ: Պրոբլեմային ուսուցման մեթոդը ժամանակակից դիդակտիկայում ուսուցման առաջավոր մեթոդներից մեկն է, քանի որ, ինչպես նշում է ժամանակակից հայ մանկավարժ Յու. Ա. Ամիրջանյանը, այն ներառում է մանկավարժական բազմաթիվ արժեքավոր մեթոդների ու հնարների օգտագործման հնարավորություններ, ենթադրում սովորողների ինքնուրույն մտածողության զարգացման լայն հեռանկարներ: Այդ մասին են վկայում պրոբլեմային ուսուցման հարցերին նվիրված՝ Ն. Գ. Դայրիի, Ա. Ն. Լեոնտևի, Ի. Յա. Լերների, Ա. Մ. Մատյուշկինի, Յու. Ա. Ամիրջանյանի և ուրիշների հետազոտությունները:

Պրոբլեմային ուսուցման էությունը, ինչպես իրավացիորեն նշում է Յու. Ա. Ամիրջանյանը, պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է: Այն պահին, երբ մասնակի որոնողական՝ էվրիստիկ զրույցի մեթոդը, առաջացնելով սովորողների զարմանքն ու տարակուսանքը, ավարտում է իր «առաքելությունը, այդ պահին առաջանում է մի իրավիճակ, որն ընդունված է անվանել պրոբլեմային:

Էվրիստիկ զրույցը արդիականացնում է սովորողների գիտելիքները, կատարում իր դերը՝ մեծացնելով նրանց հետաքրքրությունը տվյալ թեմայի նկատմամբ առաջացնելով անդունդ իմացածի և չիմացածի միջև ու, որ ամենակարևորն է՝ զարմանք: Ոչ մի առաջընթաց, հայտնագործություն առանց զարմանքի տեղի չի ունենում: Կարճ ասած՝ վերոհիշյալ օրինակում մեծ փիլիսոփան, զրուցելով աշակերտների հետ, «քարը զցում էր փոսը՝ ավարտելով այդ կերպ էվրիստիկ մեթոդի առաքելությունը, որից հետո գործելու իրավունքը՝ էստաֆետը, փոխանցվում է մի այլ արդյունավետ մեթոդի, որը մանկավարժական գրականության մեջ կոչվում է պրոբլեմային ուսուցման մեթոդ:

Ըստ Յու. Ա. Ամիրջանյանի՝ զանազանվում են պրոբլեմային ուսուցման պրոբլեմային շարադրանքի, խթանող, մասնակի որոնողական կամ էվրիստիկական և հետազոտական առաջատար մեթոդներ և դրանց օժանդակող մեթոդներ՝ բացատրացուցադրական, վերարտադրողական, ծրագրավորված և այլն:

Չնայած պրոբլեմային ուսուցման մեթոդի գաղափարն իր ժամանակին արծարծվել է դեռևս Ժ. Ժ. Ռուսոյի կողմից, այնուամենայնիվ դրա գիտական մշակումը կատարվել է

միայն 20-րդ դարի 60-ական թվականներից սկսած: Այդ տարիներին զուգահեռաբար ընթանում էին ուսուցման մի այլ արդյունավետ տեխնոլոգիայի՝ ծրագրավորված ուսուցման մեթոդական մշակման աշխատանքները: Եվ եթե «ծրագրավորված ուսուցման հիմքում ընկած է ալգորիթմական, տրամաբանական մտածողության տեսակը, ապա պրոբլեմային ուսուցումը հիմնականում հենվում է ստեղծագործական, էվրիստիկ մտածողության վրա,- նշում է հայտնի մեթոդիստ Ն. Վ. Մետելսկին

Պրոբլեմային ուսուցման տեսության մշակմամբ զբաղվել են լեհ պրոֆեսոր Վ.Օկոնը, Ա. Մատյուշկինը, Ի. Յա. Լերները, Մ. Ն. Սկատկինը և ուրիշներ: Այդ տեսության կարևորագույն գաղափարները ուսումնական պրոբլեմի և պրոբլեմային իրավիճակի գաղափարներն են: Վերջինս բնութագրվում է որպես օբյեկտի և սուբյեկտի միջև մտավոր փոխազդեցության հատուկ տեսակ, որը ճանաչողական պահանջմունքներ է առաջացնում սուբյեկտի մոտ՝ մղելով նրան ձեռք բերել (բացահայտել կամ յուրացնել) նոր գիտելիքներ կամ գործունեության տեսակներ: Առանձնապես կարևոր է նշել, որ ճանաչման ենթակա օբյեկտը չնայած պետք է մշտապես գտնվի սուբյեկտի մտավոր կարողությունների սահմաններում, սակայն միաժամանակ առաջացնի որոշակի ինտելեկտուալ դժվարության հոգեվիճակ:[7]

Պրոբլեմային ուսուցման կիրառման դեպքում ուսուցիչը սովորողին պատրաստի գիտելիք չի փոխանցում, այլ ներկայացնում է խնդիրը կամ հարցը, որը պետք Է լուծում գտնի և ենթադրում է լուծման համար տարբեր ուղիների որոնում, այսինքն՝ տվյալ խնդիրը լուծելու նախաձեռնություն է առաջացնում: Որպեսզի երեխային չդարձնենք գիտելիքի շտեմարան, ճշմարտությունների, կանոնների ու բանաձևերի շտեմարան, պետք է նրան սովորեցնել մտածել[3].

21-րդ դարի կրթության նպատակն է բավարարել անհատի եւ հասարակության ներկա եւ ապագա կարիքները, պատրաստել անհատներ, որոնք ունակ են ապրել ու զարգանալ գիտելիքահեն տնտեսական միջավայրում:

Կիրառվող մեթոդներից արդյունավետ է և առավել հաճախակի է օգտագործվում պրոբլեմային ուսուցումը: Նշված մեթոդի էությունը պրոբլեմային ուսուցման ստեղծումն է, որը նպաստում է աշակերտների մտածողության մակարդակի բարձրացմանը: Այն ընձեռում է ստեղծված իրավիճակը գիտակցելու, առաջադրված խնդրում եղած հակասությունները հայտնաբերելու, անհայտը որոնելու, ունեցած գիտելիքները

փորձարկելու, վարկածներ առաջադրելու, գործողության նոր եղանակ հայտնաբերելու, պրոբլեմը լուծելու, վերջնական նպատակին հասնելու հնարավորություն:[1] Ուսուցման այս ձևը ունի առավելություններ, քանի որ այն զարգացնում է

.սովորողների տրամաբանությունը,

. ուսումնական նյութը դարձնում է ապացուցելի,կասկած այլևս չի հարուցում

. հնարավոր է դարձնում օգտագործել աշակերտների եղած բոլոր գիտելիքները,

. բնականաբար կապում է այլ առարկաների հետ՝ ուսումնական պրոցեսը դարձնելով ավելի հետաքրքիր

. ուսուցման գործընթացը դարձնում է հուզական,

.ինտենսիվացնում է ուսուցումը և արագացնում նրա տեմպը, ինչպես նաև մեծացնում է աշակերտների ինքնագործունեության շրջանակը, լայնացնում նրանց որոնողական՝ հետազոտական աշխատանքներ կատարելու ոլորտը,

.Հոգեբանների պնդմամբ՝ ինտելեկտուալ զարգացումը իրականացվում է՝ միայն հաղթահարելով որոշակի բարդություններ կամ ինտելեկտուալ դժվարություններ:

Ցանկանում ենք նշել, որ պրոբլեմային ուսուցման մեթոդով ձեռք բերվածը ավելի երկար է մտապահվում: Պրոբլեմային հարցը այն է, որն առաջացնում է իմացական դժվարություն: Եթե հարցի պատասխանը չի պարունակում նոր գիտելիքներ կամ որոնելի անհայտ, ապա այդպիսի հարցը պրոբլեմային չէ[2]:

Պրոբլեմային ուսուցման տեխնիոլոգիայի կիրառման շնորհիվ աշակերտը ծավալում է ինքնուրույն որոնողական գործունեություն, գիտելիքի ձեռքբերում և եզրահանգում: Սովորողները ստանալով ուսուցչի կողմից տեղեկություններ, պրոբլեմային իրավիճակի հաղթահարման որոշակի գիտելիքներ, կհանգեն առաջադրված պրոբլեմի հաղթահարման: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման նպատակն է ակտիվացնել սովորողի մոտ ուսուցանվող թեմայի նկատմամբ հետաքրքրության դրսևորման, ճանաչողական, ինքնուրույն ստեղծագործական մտածողության զարգացման և գործնականում այն կիրառման հմտություններ, որոնք համապատասխանում է 21-րդ դարի հանրակրթական սկզբունքներին՝

- Սովորել իմանալու
- Սովորել գործելու

- Սովորել լինելու
- Սովորել միասին ապրելու

Դժվարությունների հաղթահարման ընթացքում սովորողների մոտ զարգանում է նոր գիտելիքների, հմտությունների և կարողությունների յուրացման անհրաժեշտություն: Սովորողը սկսում է կարողանալ տեսնել խնդիրները, որը մտածելու կարողունակության ամենաարժեքավոր հատկությունն է: Խնդիրների լուծումը դրական է ազդում սովորողի հուզական ֆոնի վրա, ստեղծում հաղորդակցման հմտությունների զարգացման պայմաններ: Պրոբլեմային ուսուցումն ունի նաև դաստիարակչական առանձնահատուկ ֆունկցիա՝ ուսուցանողի գիտական աշխարհայացքը ձևավորելու ֆունկցիան է, որի միջոցով ուսուցիչը կողմնորոշում է ճանաչողական, տեսական և պրակտիկ գործունեությունը, դիրքորոշումը, կարգավորում է նրանց հայացքների համակարգը, զարգացնում և ձևավորում պատկերացումները, համոզմունքները աշխարհի, նրա օրինաչափությունների, հասարակության և մարդու նկատմամբ[1]:

Պետք է նաև ընդգծել որոշ սահմանափակումներ այս ուսուցման մեջ. 1. Խնդրի բոլոր լուծումների որոշումները ժամանակի մեծ ծախս են պահանջվում, դասաժամը կարող է չբավականացնել: 2. Շատ հիմնավորված հասկացություններ և օրինաչափություններ աշակերտը ունակ չէ ինքնուրույն բացահայտել: 3. Ուղղելով ուշադրությունը խնդրի լուծման առանձին փուլերի վրա, նոր ենթադրությունների ապացուցմանը՝ աշակերտը հաճախ կորցնում է ամբողջության պատկերացումը, չի կարողանում հաջորդաբար վերարտադրել եզրակացությունը: 4. Աշակերտների մեծամասնությունը չի դիմանում երկարատև մտավոր աշխատանքին: 5. Դպրոցականները առաջ են քաշում ինչպես ճշգրիտ, այնպես էլ սխալ առաջարկություններ: Ընդ որում՝ սեփական սխալ մտքերը «հաճախ ամրապնդված և հիշվող են, քան ուսուցչի առաջադրած ճիշտ մտքերը: Մի քանի դասաժամ հետո աշակերտը արտաբերում է իր սխալ մտորումները, մոռանալով ուսուցչի ուղղումները, այդ պատճառով աշակերտի մտքում ճիշտ տեղեկությունը հիմնավորելու համար պետք է հաճախ անդրադառնալ տվյալ սխալին: Մեծ է պրոբլեմային ուսուցման դերը աշակերտների ճանաչողական գործունեության ակտիվացման, մտածողության ձևավորման և զարգացման գործընթացներում:

Գլուխ 1

1.1 Պրոբլեմային ուսուցման կառուցվածքը և մեթոդները

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման գաղափարը նոր չէ: Մեծագույն մանկավարժներ անցյալում միշտ ուղիներ է փնտրել ուսումնական գործընթացը փոխելու համար, որոնք կհանգեցնեին ճանաչողության դրսևորմանը, մտավոր զարգացմանը և սովորողների կարողունակությանը (Յա.Ա. Կոմենսկի, Ի. Յա. Լերներ, Ջ.Ջ. Ռուսո, Ի.Գ. Պեստալոցցի, Ֆ.Ա.Դիսթերվերգ, Կ.Դ. Ուշինսկի և այլոք):

21-րդ դարում պրոբլեմային ուսուցման գաղափարները ինտենսիվ զարգացան և տարածվեցին կրթական պրակտիկայում: Արտասահմանյան մանկավարժության մեջ պրոբլեմային ուսուցման հայեցակարգը զարգացում է ապրել Ջ.Դյուիի գաղափարների ազդեցությամբ, նրա «Ինչպիսի մտածող ենք մենք» գրքում ամերիկացի ուսուցիչը մերժում է ավանդական ուսուցման մեթոդը, որը ուսուցչակենտրոն է և հակադրվում դրան առաջ քաշելով նոր աշակերտակենտրոն ուսուցման մեթոդներ, որոնց միջոցով աշակերտին աստիճանաբար պետք է ուղորդել գիտության յուրացմանը, ինքնուրույն միտքի արթնացմանն ու զարգացմանը: Մտածելը, ասում է Ջ.Դյուին, խնդիրների լուծում է:

Պրոբլեմային ուսուցումը իրենից ներկայացնում է ուսումնական մի գործընթաց, որի կիրառման ժամանակ ապահովվում է սովորողների մոտիվացիայի բարձր մակարդակ: Ուսուցման գործընթացում պրոբլեմային խնդիրը կատարում է որոնելի անհայտի բացահայտման գործառույթ, որն իրականացվում է հետևյալ հերթականությամբ.

1. Պրոբլեմային իրավիճակի ստեղծում, պրոբլեմային հարցի հղում
2. Ենթադրությունների առաջ բերում, որոնք իրենցից ներկայացնում են ենթադրություններ պրոբլեմի լուծման հնարավոր տարբերակների մասին (իհարկե անհրաժեշտ է, որ սովորողը հիմնավորի ենթադրությունը, այն կարող է ընդունվել կամ ոչ)
3. Առաջարկված ենթադրությունների փորձարկում, հավաստիության ստուգում
4. Պրոբլեմի լուծում, արդյունքների ընդհանրացում, ամրապնդում և կիրառում:

Պրոբլեմային իրավիճակը պրոբլեմային ուսուցման կենտրոնական օղակն է: Այն աշակերտների համար ստեղծված հոգեկան լարված պահն է, որը լի է

հակասություններով: Հոգեբանները գտնում են, որ մարդը սկսում է մտորել, երբ որ անհրաժեշտ է ինչ-որ բան հասկանալ: Այդ իրավիճակին կարելի է աշակերտին հասցնել դասի սկզբին՝ հասկացնելով նրան, որ իր ունեցած գիտելիքները բավարար չեն բացատրելու ուսուցչի կողմից բերված իրավիճակները: Ուսուցչի կողմից հատուկ կազմակերպված ինտելեկտուալ բարդությունները, որոնք աշակերտին ստիպում են լրացուցիչ գիտելիքներ ձեռք բերել, ներկայացնում են պրոբլեմատիկ իրավիճակ: Պրոբլեմային իրավիճակ նշանակում է մարդու գործունեության ընթացքում ի հայտ եկող անբացատրելին և անհասկանալին: Եթե պրոբլեմային իրավիճակի հետազոտությունների ընթացքում մարդը հասկանում է այն պատճառը, որը առաջ է քաշել դժվարությունները, և որոշում է կայացնում իր ունեցած գիտելիքների հիման վրա, ապա պրոբլեմային իրավիճակը դադարում է պրոբլեմ լինելուց: Պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր պրոբլեմատիկ իրավիճակ վերածվում է պրոբլեմի: Պրոբլեմի և նրա ձևակերպման բացահայտումը մտավոր ունակության առաջին փուլն է: Պրոբլեմային մտահաղացումն այն է, երբ ուսուցիչը, ստեղծելով պրոբլեմային իրավիճակը, «…շարադրում է նյութը՝ բարձրաձայն քննարկելով, արտահայտելով տեսակետներ, քննարկելով դրանք, հերքելով հնարավոր անհամաձայնություններ, ապացուցելով ճշմարտությունը փորձերի միջոցով: Ուսուցիչը աշակերտներին փորձարկումների միջոցով ներկայացնում է գիտական ուսումնասիրման ճանապարհը: Աշակերտները հետևում են մտահաղացմանը և նրանց մոտ հարցեր են առաջանում: Ընկալելով մտահաղացման պատկերը՝ աշակերտները տեղափոխում են այն մի այլ իրահիճակ, որի հետ կարող են հետագայում բախվել: Ձրույցի ընթացքում ուսուցիչը աշակերտների առջև դնում է պրոբլեմային խնդիր և դրան հետևող մի շարք համակցված հարցեր, որոնց պատասխանները տանում են դեպի խնդրի լուծմանը»[2]: Մասնակի որոնողական մեթոդներում աշակերտները իրենց առջև դրված պրոբլեմային խնդիրը լուծում են ինքնուրույն, բայց ուսուցիչը նրանց օգնություն է ցուցաբերում՝ տալով նրանց գործունեության պլան, հուշելով առանձին քայլեր դժվարությունների հանդիպելիս: Պրոբլեմային ուսուցումը հանդիսանում է սովորողի տրամաբանական, վերլուծական, քննադատական մտածողության զարգացման կարևոր միջոց: Պրոբլեմային ուսուցման ընթացքում կարևոր դեր են խաղում «ինչու՞», «հնարավո՞ր է պատճառը բացատրել»,

«կարո՞ղ ենք ապացուցել» և այլ հարցադրումներ: Երբ պարզվում է, որ սովորողները ի վիճակի չեն լուծել պրոբլեմային խնդիրները, պետք է առաջադրել ենթապրոբլեմներ[6]: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը պատմության դասերին պետք է սկսել իրականացնել ցածր դասարաններից՝ 6-րդ դասարանից, որպեսզի սովորողների մոտ զարգացնեն ստեղծագործական ունակություններ:

Խնդրահարույց առաջադրանքի կառուցվածքում առանձնանում են հետևյալ բաղկացուցիչ տարրերը

1) պայմաններ կամ տվյալներ, որոնք հայտնի են սովորողներին, սովորողները նշում են լուծման որոշ պարամետրեր.

2) անհայտը, փնտրվածը, որի հայտնաբերումը հանգեցնում է նոր գիտելիքների ձեռքբերման. Հաշվի առնելով պրոբլեմային ուսուցման առավելությունները միևնույն է հնարավոր չէ իրականացնել հանրակրթություն, որը ամբողջությամբ հիմնված կլինի պրոբլեմային ուսուցման մեթոդների կիրառման վրա: Նախ որ դա երկար ժամանակ կպահանջի (ավելի քան կարելի է հատկացնել որևէ կոնկրետ առարկայի դասավանդման ժամաքանակի, իսկ ներկայումս Հայոց պատմությանը հատկացված է 1,5 ժամ՝ ըստ ուսումնական պլանի բաղադրիչի), և ի վերջո ծրագրի ողջ բովանդակության «վերագտնումը» պրոբլեմային ուսուցման մեթոդի կիրառմամբ կհանգեցներ սովորողի որոշ կրթական հմտությունների անբավարար զարգացմանը (օրինակ՝ գրքով ինքնուրույն աշխատելը): Ուստի մանկավարժական խնդիր է առաջանում պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան կիրառել պատմության դասի առանձին բաժինների, թեմաների, հարցերի ուսուցանելու ժամանակ, որը պահանջում է ուսումնական նյութի տրամաբանական և դիդակտիկ վերլուծություն, հիմնական կամ այլ տեսակի խնդիրների ձևակերպման հնարավորության պարզաբանում գնահատելով դրանց արդյունավետությունը ուսումնական չափորոշիչային նպատակներին հասնելու համար:

Վերը նշվածը մեծապես կախված է կոնկրետ դասի աշխատանքային պայմաններից: Պատմության դասավանդման ժամանակ պրոբլեմային ուսուցման մեթոդի կիրառումը սովորողներին ուղղորդում է ինքնուրույն փնտրել ուսուցչի կողմից առաջադրված խնդիրի լուծելու ուղիներ: Այն իրականացնելու համար սովորողը անհրաժեշտաբար պետք է օգտագործի առկա գիտելիքներ և մտավոր գործունեության տարբեր մեթոդներ:

Սխալ է այն մոտեցումը, որ պրոբլեմային ուսուցման մեթոդի կիրառումը կհեշտացնի դասի սերտման գործընթացը: Չպետք է տալ հուշող խնդիր-առաջադրանքներով հարցադրումներ, որոնք կստեղծեն ոչ թե պրոբլեմային իրավիճակ, այլ պասիվություն, քանի որ հուշումը կհանգեցնի սովորողների մտածողության սահմանափակմանը: Անընդունելի է նաև տալ այնպիսի հարցեր, որոնց մասին սովորողները գաղափար չունեն: Պրոբլեմային իրավիճակ կարելի է ստեղծել այն դեպքում, երբ սովորողները նոր հաղորդվող դասի մասին ունեն որոշակի գիտելիքներ, քանի որ պրոբլեմային ուսուցումը միաժամանակ անհայտը հայտնիի միջոցով հայտնագործելու, նոր գիտելիքներ ձեռք բերելու գործողություն է[2], ուստի ամենակարևոր դերը խաղում է խնդրահարույց առաջադրանքը, հետևաբար, անհրաժեշտ է ավելի մանրամասն անդրադառնալ խնդրահարույց հարցի մշակման տեխնոլոգիային:

Պրոբլեմային ուսուցման գործողություններին սովորողներին վարժեցնելու նպատակով ուսուցիչը ստեղծում է պրոբլեմային իրավիճակ, որոնում դրանց հաղթահարման ուղիները և հասնում վերջնական նպատակին, մինչդեռ սովորողները մտովի մասնակցում են այդ գործընթացին: Պրոբլեմային տեխնոլոգիայով դասերի կազմակերպումը և անցկացումը ուսուցչից պահանջում է այդ ուսուցման հետ կապված մի շարք մանկավարժական հասկացությունների և տերմինների իմացություն: Պատմության դասի հետ կապված անհրաժեշտ է հետևել հետևյալ կառուցվածքին.

1. Պրոբլեմ – տեսական և գործնական խնդիր, որը պահանջում է լուծում: Պրոբլեմը գիտելիք է չգիտելիքի մասին, ինչպես նաև այն ուղիների մասին, որոնց միջոցով չգիտելիքը վերածվում է գիտելիքի:
2. Ուսումնական պրոբլեմ- գործնական կամ տեսական խնդիր, որն ունի անհայտից բխող որոշակի հասկացությունները, որոնց հաղթահարումը նոր գիտելիքների, գործողության նոր եղանակների պահանջ է դնում:
3. Պրոբլեմային շարադրանք – ուսուցչի կողմից հաղորդվող այն շարադրանքն է, որը պարունակում է ճանաչողական դժվարություն, ճանաչողական հարց կամ խնդիր, որոնք առաջ են բերում իրավիճակներ, որոնց հաղթահարման համար սովորողները կատարում որոնողական, հետազոտական աշխատանքներ, ի հայտ բերում նյութի մեջ եղած հակասությունները: Ինչպես ասվեց, պրոբլեմային շարադրանքը լրիվ չափով տրվում է ուսուցչի կողմից: Շարադրման ընթացքում բացահայտվում են և լուծվում

հակասությունները, արվում են դատողություններ, կառուցվում են վարկածներ, մերժվում են անհավանական պատասխանները և, ի վերջո, հանգում ճշմարտության:

4. Պրոբլեմային հարց – հարց, որն առաջացնում է ճանաչողական կամ ինտելեկտուալ դժվարություն և հակասություն: Այդպիսի հարցի պատասխանը չկա սովորողների գիտելիքներում և ոչ էլ առկա է տեղեկատվության մեջ: Եթե պրոբլեմային հարցի պատասխանը չի պարունակում նոր գիտելիքներ, ուրեմն այդ հարցը պրոբլեմային չէ:

5. Ճանաչողական կամ պրոբլեմային խնդիր – Ճանաչողական (պրոբլեմային) խնդիրն այն խնդիրն է, որի լուծման համար սովորողները որոնում են նոր գիտելիքներ, գործողությունների նոր եղանակներ:

6. Պրոբլեմային իրավիճակ – այն դժվարագույն կացությունն է, որն առաջանում է սովորողների հոգեվիճակում ծագած խնդրի, հարցի, փաստի և անհայտի հայտ-նաբերման եղանակների ու մեթոդների միջև հակասությունների հիման վրա:

1.2 Պրոբլեմային ուսուցման կիրառումը հայոց պատմության դասերին

Պատմության դասին կարող է ուսումնասիրել պատմական խնդիրների հետևյալ տեսակները. 1. Ինքնին հետազոտական խնդիրներ: (Որպես դրանց ուսումնասիրության մաս, անհրաժեշտ է բնութագրել աղբյուրները, թվագրել այն, որոշել կարևորության աստիճանը, տվյալների ստուգման աստիճանը և այլն):

2. Պատմական խնդիրներ, որոնց թվում կարելի է առանձնացնել երեք խոշոր խումբ .

1) պատմական իրադարձությունների, երևույթների, միտումների և գործընթացների պատճառների սահմանում
2) դրանց էության, բնութագրերի սահմանում
3) դրանց արդյունքների և հետևանքների բացահայտում, այսինքն՝ տեղը պատմության մեջ, բացահայտելով պատմական խնդիրներն ըստ ուղղությունների.

- Սոցիալական
- Տնտեսական
- Քաղաքական
- Պատմական և ժողովրդագրական
- Ռազմական;
- Մշակութային;
- Կրոնական;
- Պատմական, հասարակական և այլն :

Օգտագործելով պրոբլեմային ուսուցման մեթոդը՝ անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր դասարանի սովորողների պատրաստակամությունը ընկալելու խնդրահարույց նյութը, գիտելիքների ընդհանուր մակարդակը, դասարանի տրամադրությունը, այդ դասարանում պրոբլեմային մեթոդով ուսուցման կիրառման փորձը: Պրոբլեմի վրա հիմնված ուսուցումն համար անհրաժեշտ է փոփոխականություն, այսինքն՝ նյութի ուսումնասիրության պրոբլեմային մոտեցման այնպիսի տարբերակի ընտրություն, որն առավել հարմար է տվյալ դասի մակարդակին: Սովորողների մոտիվացիայի բարձր մակարդակ ունեցող դասարանում փաստ ներկայացնելուց հետո, կարելի է մեկը մյուսի հետևից խնդիրներ դնել, ցածր

մոտիվացիայով դասարանում կարելի է բացատրել նյութի էությունը և վերջում անցկացնել խնդրահարույց բնույթի հարցադրում:

Սովորողների պատճառահետևանքային տրամաբանությունը զարգացնող մի շարք ռազմավարություններից են

.Սովորողներին հանձնարարել ստեղծել այնպիսի իրադարձությունների մոդելներ և դիագրամներ, որոնք տեսանելի կերպով ցույց կտան պատճառահետևանքային շղթաները, դրանց կապերը և արդյունքները

.Սովորողներին տալ պատճառների ցուցակ կամ պատճառները ներկայացնող քարտեր և խնդրել բացատրել դրանք

.Սովորողներին տալ իրադարձության շարադրանք, որի որևէ դրվագ նրանք պետք է բացատրեն շարադրանքի տարբեր տարրերը իրարից առանձնացնելու վերակազմելու միջոցով

.Սովորողներին հանձնարարել անցյալում որոշում կայացնող որևէ մարդու դեր ստանձնել, ստեղծել որոշումներ կայացնելու պահերի վերարտադրման համատեքստ և որոշումներ կայացնել ու կանխատեսել դրանց հնարավոր ազդեցությունների վերաբերյալ

.Սովորողներին հանձնարարել այլընտրանքային պատմության (Ինչ՞ կլիներ եթե...)վերլուծություն իրականացնել, որպեսզի քննեն և ամրապնդեն իրադարձությունների տարբեր բաղադրիչների միջև եղած կապերի վերաբերյալ սեփական ընկալումը[7]:

Նոր նյութը բացատրելիս անհրաժեշտ է օգտագործել պրոբլեմային ուսուցման երկու ձև՝ խնդրի ձևակերպում և հետախուզական զրույց:

Խնդրի ձևակերպման ընթացքում պրոբլեմային իրավիճակը ստեղծում և լուծում է ուսուցիչը՝ ներկայացնում ոչ միայն նյութը, այլ մտածում՝ հաշվի առնելով հնարավոր մոտեցումներն ու լուծումները:

Հետախուզական զրույցի իմաստը սովորողների ներգրավելն է դասին առաջադրված խնդիրների լուծմանը՝ նախապես պատրաստված հարցերի միջոցով: Այս մեթոդը օգտագործում են այն դեպքերում, երբ սովորողները անհրաժեշտ գիտելիքներ ունեն առաջարկվող խնդիրների լուծմանը ակտիվորեն մասնակցելու համար: Սովորողները վերլուծում և ավելի խորն են յուրացնում նյութը:

Դասարանում պրոբլեմային ուսուցման մեթոդը կիրառելիս պետք է վստահ լինել, որ սովորողները ունեն որոշակի գիտելիքներ տվյալ թեմայից և ունակ են վերարտադրողականորեն ձեռք բերել նոր գիտելիքներ, արդյունքում պրոբլեմի հաղթահարման գործընթացում նախորդ դասերի նյութն ինքնաբերաբար թարմացվում է։

Օրինակ 1. 6-րդ դասարանում «Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորությունը» թեմայից ուսուցիչը կարդում է «Արտաշեսի ժամանակ մեր հայոց աշխարհում անմշակ հող չէր մնացել՝ ոչ լեռնային և ոչ դաշտային, այնքան էր շենացել երկրիը)» տալիս պրոբլեմային հարց.,

«ինչպե՞ս կբացատրեք սկզբնաղբյուրի տեղեկությունը», «ի՞նչն եք կարևորում Արտաշես 1-ինի գործունեության մեջ» այստեղ խնդրի նպատակն այն է, որ սովորողը ներկայացնի, որ հողային բարենորոգումների արդյունքում հողազուրկ գյուղացիները ձեռք բերեցին հող, ինչպես նաև կներկայացնեն Արտաշես 1-ինի բարենորոգումները:

Հիմնվելով պատմական համատեքստի որևէ դրվագի բաղադրիչների և պատճառների ուսումնասիրության վրա՝սովորողներին առաջարկում ենք պատկերացնել, թե հուզական ինչ իրավիճակում կհայտնվեր այդ դրվագում ապրած պատմական կերպարը, դեմքի ինչպիսի՞ արտահայտություն նա կընդուներ այդ պահին: Ի դեպ՝ պարտադիր չէ, որ պաստառային պատկերվող կերպարի դեմքի արտահայտությունը փոխվի, կարելի է նաև նրա հույզերը գրավոր արտահարտությամբ փոխանցել: Սովորողներին աջակցող հարցեր են առաջադրվում հուզական պաստառը կազմելու համար[7]:

Օրինակ 2. 7-րդ դասարանում համաշխարհային պատմությունից «Բյուզանդիայի ոսկեդարը» դասից սովորողները արդեն ծանոթ են Հուստինիանոս I-ին և հայոց պատմության «Հայաստանը VI-IX դարերում» թեման ուսումնասիրելու ժամանակ ծանոթացնելով Հուստինիանոս կայսեր քաղաքականությանը, ներկայացվում է թեման, այնուհետև քննարկման հարց հատվածից երեխաներին ուղղվում պրոբլեմային հարց

«Ինչո՞վ եք բացատրում հայ կանանց նկատմամբ Հուստինիանոս կայսեր հոգատարությունը»: Դասի ընթացքում երեխաները «հավաքում» են, գրում են մտքերը, լսում տեղեկատվություն, այնուհետև հրավիրում սովորողներին արտահայտել իրենց վերաբերմունքը այս կայսրի նկատմամբ: Դասի վերջում համակարգում և ընդհանրացնում են գիտելիքները իրենց կարծիքներրը հստակ արտահայտելու համար: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայով դասերի հետախուզական մթնոլորտը թույլ է

տալիս սովորողներին ներգրավվել ակտիվ ուսումնական գործընթացում: Ուսուցչի դերը փոխվում է, նա դառնում է խորհրդատու, օգնական, դիտորդ, տեղեկատվության աղբյուր, համակարգող: Ուսուցիչը դառնում է սովորողների ինքնուրույն կրթական գիտելիքների կազմակերպիչը:

Օրինակ 3. 7-րդ դասարանում «Պայքար թագավորական իշխանության ամրապնդման համար» թեմայից Պապ թագավորի ձեռնարկումների կապակցությամբ կարելի է առաջադրել պրոբլեմային հարցեր. ա) «Եթե չկառուցվեր Արշակավան քաղաքը, արդյո՞ք կպահպանվեր կենտրոնաձիգ իշխանությունը», բ) «Ինչու՞ Պապ Թագավորը կարգադրեց եկեղեցիների հաշվին հող տալ շինականներին» գ) «Ինչպիսի՞ իրադրություն էր տիրում Մեծ Հայքում, որո՞նք են աղբյուրները և հնարավոր էր արդյոք փոխել որևէ բան»:

Օրինակ 4. 8-րդ դասարանում Հայկական հարցի վերաբացումը թեմայից կարելի է պրոբլեմային հարց ուղղել «Ինչու Հայկական հարցը ավելի սրվեց առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին»: Այստեղ պետք է սովորողները գան այն եզրահանգմանը, որ Հայկական հարցը մեծ տերություններին հետաքրքրում էր այնքանով, որքանով այն կարող էր ծառայել իրենց նվաճողական քաղաքական շահերին, իսկ այն սրվեց քանի որ պատերազմի նախօրյակին օրակարգում էր աշխարհի վերաբաժանման հարցը:

Օրինակ 5. 9-րդ դասարանում «Խորհրդային Հայաստանը 1923-1941թթ» թեմայով խնդրահարույց հարց է «1923-1941թթ.-ը շրջադարձայի՞ն էին տնտեսության զարգացման մեջ» կամ «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԽՍՀՄ-ի տարիների տնտեսության վերելքը, հայ ժողովրդի համար Ի. Ստալինը հրաշք էր, թե հրեշ»:

Օրինակ 6. 9-րդ դասարանում «Հայ Ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945թթ.)» թեմայից, տրվող խնդրահարույց բնույթի առաջադրանքներ են.

«Ո՞րն է Հայ ժողովրդի դերը Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի մեջ: Արդյո՞ք մենք կռվում էին մեր հայրենիքի սահմանների համար: Ինչո՞ւ այդքան թանկ գնով ձեռք բերված հաղթանակից չկարողացանք օգտվել»:

Պաստառները ևս պատմական հրաշալի աղբյուր են սովորողներին օգնելու վերլուծել, մեկնաբանել տարբեր իրադարձություններ և դրանց համատեքստը: Սովորողները կարող են պաստառներ ստեղծել՝ քննարկելով կամ վերլուծելով գուշակել իրական պատմական պաստառները և դրանց կարգախոսները:

Օրինակ՝ Լազար Լիսեցկու պաստառը՝ Ռուսական քաղաքացիական պատերազմի մասին/ կարմիր սեպով հարվածիր սպիտակներին,1919-1920թթ.:

Հայոց պատմության դասին կիրառվում են պրոբլեմային համարվող անավարտ նախադասություններ.

Ինձ համար ամենահետաքրքիրն այն էր, որ ——————— որովհետև ——————:

Այսօր իմ սովորած դասում ———————————:

Ինձ դուր եկավ———————————քանի որ ———————————:

Ինձ դուր չեկավ ——————————————————:

Հնարավոր է պրոբլեմային իրավիճակ ստեղծել, երբ նոր փաստերն ու եզրակացությունները իրենցից հասկացություններ են ներկայացնում:

Օրինակ՝ 6-րդ դասարանում «Հայկական լեռնաշխարհը որպես մարդկության բնօրրան» թեմայի ավարտին ուսուցիչը կարող է տալ տրամաբանական պրոբլեմ առաջացնող հարց «Տոհմային համայնքը սովորաբար զբաղեցնում էր ընդարձակ՝ մինչև 200մ^2 մակերեսով ապրելու տարածք: Ի՞նչ եզրակացություններ կարող են անել հնագետները նման բնակավայրի մնացորդները հայտնաբերելուց հետո»:

Պրոբլեմային իրավիճակ կարելի է ստեղծել նաև Պատմությունը «դատարանի» առջև դերային խաղով, այն հրաշալի միջոց է սովորողների ինքնուրույն կամ հետազոտական ու քննադատական մտածողությունը զարգացնելու գործում:

Օրինակ՝ սովորողների հետ ընտրել որևէ պատմական կերպարի, որ կանգնում է «դատարանի» առաջ (Վասակ Սյունի,Մկրտիչ Խրիմյան,Եղիշե Չարենց,Մլեհ..)

Եզրակացություն

Հետազոտական այս աշխատանքի մեջ փորձ է արվել դիտարկել պրոբլեմային ուսուցման տեսությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով պատմության դասավանդման գործընթացում դրա որոշ տարրերի օգտագործման հնարավորությանը: Պրոբլեմային և ավանդական ուսուցման հիմնական տարբերությունը տեսնում ենք երկու կետում՝ դրանք տարբերվում են մանկավարժական գործընթացի կազմակերպման նպատակներով և սկզբունքներով: Ավանդական տիպի կրթության նպատակը գիտական գիտելիքների արդյունքների յուրացումն է, սովորողներին գիտության հիմունքների իմացությամբ զինելը, նրանց մեջ համապատասխան հմտություններ և կարողություններ սերմանելը, իսկ պրոբլեմային ուսուցման մեթոդի նպատակը, բացի գիտելիքներով զինելուց. նաև այդ արդյունքների ստացման հենց ճանապարհին գիտելիքի յուրացումն է, սովորողի ինքնուրույն ճանաչողական գործունեության ձևավորումն ու զարգացումն է, նրա ստեղծագործական հմտությունը:

Խնդրահարույց ուսուցման կիրառման արդյունքում աշակերտների մոտ զարգանում են մտավոր գործողությունների հմտություններ, զարգանում են գիտելիքների փոխանցման, ուշադրության, կամքի, ստեղծագործ երևակայության հմտություններ:

Հանրակրթության առջև դրված են բազմաթիվ խնդիրներ՝ գիտելիքների, հմտությունների, կարողությունների և դիրքորոշումների ձեռքբերում և ոչ պակաս կարևոր աշակերտների մտածողության, նրանց ստեղծագործական կարողությունների զարգացում: Մեր դպրոցների խնդիրն է ներդաշնակ զարգացած անհատականություն ձևավորելը, իսկ համակողմանի և ներդաշնակ զարգացած անհատականության ամենակարևոր ցուցանիշը մտածողության բարձր մակարդակի հասնելն է: Ուսուցիչը սովորողներին փոխանցելով գիտելիքներ՝ նրանց սովորեցնում է մտածել և դիտարկել, արտահայտել այն ինչ հասկանում են: Արդյունքում սովորողը ձեռք է բերում ոչ միայն գիտելիք, այլև ինքնուրույն մտածելու կարողություն:

Պրոբլեմային ուսուցման մեթոդի վրա հիմնված տարրերի համակարգված օգտագործումը թույլ է տալիս սովորողների մոտ զարգացնել քննարկելու, պատճառաբանելու, վերլուծելու, վիճելու, ապացուցելու սովորությունը, նրանք ներգրավվում են

հաղորդակցման գործընթացում: Պրոբլեմային ուսուցման մեթոդի վրա հիմնված ուսուցումը ձևավորում է ներդաշնակորեն զարգացած ստեղծագործ անհատականություն, որն ունակ է տրամաբանորեն մտածելու, լուծումներ գտնելու տարբեր խնդրահարույց իրավիճակներում և կարող է համակարգել, կուտակել գիտելիքներ, օժտված է բարձր ներդաշնակությամբ, ինքնազարգացման և ինքնաշտկման կարողություններով: Սովորողի նկատմամբ կիրառելով պրոբլեմային իրավիճակներ հանգեցնում ենք նրան, որ նա չի «տրվում» խնդիրներին, այլ ձգտում է լուծել դրանք, դրանով պայմանավորված գործ կունենանք ստեղծագործ մարդու հետ, ով միշտ ունակ է փնտրելու, իսկ դա նշանակում է, որ սովորողը ապագայում արդեն ավելի պաշտպանված կլինի սթրեսից: Եվ սա համարվում է պրոբլեմային ուսուցման մեթոդաբանության կիրառման ևս մեկ լրացուցիչ դրական կողմ:

Գրականության ցանկ

1. Յու. Ամիրջանյան, «Մանկավարժ», Երևան 2005թ
2. Յու. Ա. Ամիրջանյան, «Պրոբլեմային իրավիճակները ուսուցման պրոցեսի ակտիվացման միջոցներ», Եր.,1975թ.
3. Վ.Ա.Սոխումլինսկի «Սիրտս նվիրում եմ երեխաներին» , Երևան 1976թ
4. Պ.Ս. Լեյբենգրուբ, «Դիդակտիկ պահանջները պատմության դասերին» Երևան 1989թ.
5. Ս. Խաչատրյան «Ուսուցման արդյունավետ հնարներ».Երևան 2020թ.,
6. Հ.Հ. Ղևոնդյան « Պատմության դասավանդման մեթոդիկան» Երևան 2001թ.
7. «Ինչու՞, ինչպե՞ս» գիրք պատմության ուսուցման, «Պարադիգմա» կրթական հիմնադրամ, 2020թ.